ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳԱՆՁԵՐԻ ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ՀԱՅՑՎԱԾՆԵՐՈՒՄ

Միջնադարյան կանոնական շատ ստեղծագործությունների նման գանձերը ևս ավարտվում են Ընդհանրական եկեղեցու երեք գլխավոր բարեխոսներին՝ Տիրամորը, Հովհաննես Մկրտչին և Ս. Ստեփաննոս Նախավկային, որոնց Հայոց եկեղեցին հավելել է նաև Ս. Գրիգոր Լուսավորչին, ուղղված բարեխոսական հայցվածներով:

Այս հայցվածներում արտահայտվող խնդրանքները վերաբերում են Հայոց աշխարհի ու եկեղեցու հոգևոր և աշխարհական դասերին՝ հայրապետից մինչև եկեղեցու ամենապարզ սպասավորը և թագավորից մինչև ռամիկը:

Բարեխոսների միջնորդությամբ առ Աստված ուղղված այս խնդրանքների մեջ արտահայտվող նման ցանկություններով ուրվագծվում է տվյալ հեղինակների հոգևոր-բարոյական իդեալը, թե ինչպիսին պետք է լինեն թագավորական ու կաթողիկոսական իշխանությունները և աշխարհիկ ու հոգևոր դասերը:

Այս հայցվածները լինելով գանձերի կանոնական կառուցվածքի մի մաս, ինչպես նաև ներկայացնելով հեղինակների գրական բարոյական ըմբռնումները, միաժամանակ կարևորվում են պատմական առումով, քանի որ թեև ընդհանուր վերացարկվածությամբ, սակայն ներկայացնում են դարաշրջանի պատկերը իր բազմաշերտ ամբողջության մեջ:

Ասվածն առավել հստակ է արտահայտվել Նարեկացու գանձերում, նախ որովհետև նրա գանձերի այդ հատվածներն առավել ծավալուն են և երկրորդ, Նարեկացին իր բանաստեղծական հանճարով և բազմաբարդ բառակապակցություններով ներկայացնում է այդ դասերից յուրաքանչյուրին, իր հայցվածները դարձնելով ցանկություն մաղթանքներ, թե ինչպիսին պետք է լինեն այդ դասերից յուրաքանչյուրի ներկայացուցիչները և իշխանության կրողները:

Ինչպես հայտնի է, գանձերը ոչ միայն չափածո գեղարվեստական ստեղծագործություններ էին, այլև եկեղեցական կատարվող ծեսերի և արարողությունների մասն էին կազմում և ըստ այդմ՝ ընկալվում որպես շարունակաբար կատարվող և հնչող գործեր: Այսինքն՝ նրանք հարաբերվում էին ոչ միայն իրենց բուն ժամանակի, այլև հետագա ժամանակների հետ: Ահա այս պատճառով «Գանձարան» ժողովածուի մաս կազմող գանձարանային միավորների հայցվածներում առ Աստված ուղղված խնդրանքը վերաբերում է ոչ

թե ժամանակի տվյալ թագավորին, կաթողիկոսին և իշխաններին, այլև այդ դասերին և աստիճաններին, որն առավել է նպաստում վերջիններիս է՛լ ավելի վերացարկված ներկայացմանը:

Գանձերի բնագրերում այս հանգամանքը արտահայտվում է նրանով, որ թագավորներն ու կաթողիկոսները ոչ թե հիշվում են անվանապես, այլ ասվում է «Թագաւորին մերոյ», «Հայրապետին մերոյ» և հետո ոչ թե անունն է գրվում, այլ փակագծի մեջ և կամ էլ դիմահայաց լուսանցքում նշվում է՝ [այս անուն], որով իսկ հայցվածը դադարում է անձին վերաբերելուց և մատնանշում է իշխանության կրողին:

Գանձերը ըստ իրենց թեմատիկայի լինում են Տոնացուցային՝ նվիրված Տերունական տոներին, Տիրամորը, սրբերին և ազգային-եկեղեցական իրադարձություններին, ինչպես նաև ծիսական՝ նվիրված այս կամ այն ծիսական արարողությանը՝ ջրօրհնեքին, մկրտությանը, պսակին, պատկեր օրհնելուն և այլն: Բանաստեղծական վարպետության արտահայտություններից է տարբեր դասերին վերաբերող հայցվածները հարաբերել տվյալ գանձի բուն թեմայի հետ և վերջինիս շրջանակում ներկայացնել այդ խնդրանք-մաղթանքները:

Նարեկացին իր գանձերը գրել է հարյուրամյա խաղաղության շրջանում, երբ ծաղկում էր ապրում հայ մշակույթը, ինչպես նաև իրենց հզորության շրջանում էին գտնվում բուն Բագրատունյաց և Վասպուրականի թագավորությունները: Շնորհիվ այս հանգամանքի, Նարեկացու գանձերի բարեխոսական հայցվածներում հավասարաչափ հիշվում են թագավորական և կաթողիկոսական իշխանությունները:

Իշխանությունը և ուժը քանի որ ընդհանրացված ձևով արտահայտվում են զորություն բառով, ուստի տարբեր գանձերի՝ թագավորին վերաբերող հայցվածներում Նարեկացին դիմելով իր սիրած նմանաձայնության միջոցին, այն կառուցում է զ հնչյունի բազմակի կիրառությամբ.

Զզաւրացեալն ի Քէն զաւրութեամբ
Զբարեպաշտ թագաւորն մեր [այս անուն]
Զաւակաւք և զաւրաւք, զարմիւք և նախնականաւք
Ամրացո՛ ընդ թեւաւք Քո հզաւր
Եւ լե՛ր մարտակից եւ զաւրավիգ ի պատերազմունս
բարբարոսաց[1]*:*

Թագավորի համար հայցվող բարեխոսությունը զ-ի նմանաձայնությամբ (ալիտերացիայով) է ներկայացվում և Հոգեգալստյան գանձում.

---

1 Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխտ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 149:

Զբարեպաշտ թագաւորն մեր իւրովք ծննդովք,
Զինուորաւք եւ զաւրապետաւք՝ աստուածութեանդ Քում պաշտաւնէիւք[1]*:*

Համանման ձևով կաթողիկոսի բնորոշումը քանի որ քահանայապետն է, ուստի կաթողիկոսին նվիրված բարեխոսական այս հայցվածներում էլ արդեն որոշակիորեն գերիշխում է Ք-ն.

Զհայրապետն մեր զՏէր [այս անուն],
Զայցելուն դատման ընտրութեան, որ ընդ Քեզն է կցորդութիւն,
Զպէտս վարժից կրթութեան, որ ընդ Քեզն է դաւանութիւն,
Զբազմամասնեայ գումարս դասուց՝ յանուն Քո ժողովելոցս[2]*:*

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսը այստեղ ներկայացվում է երկնային իշխանության հետ կցորդությամբ և համարվում է ամբողջությունը երկրային հոգևոր դասերի:

Ս. Ծննդյան գանձի բարեխոսական հատվածում Տիրամորն ուղղված հայցվածում էլ Նարեկացին ասում է.
Թագաւորաց եւ իշխանաց՝ յաղթող լինել ի պատերազմունս[3]*:*

Թե ինչպիսին պետք է լինեն թագավորը, իշխանները, զորքը և համայն ժողովուրդը, Նարեկացին ներկայացնում է հետևյալ տողերով.

Թագաւորաց եւ իշխանաց՝ քաջութիւն եւ ուղիղ դատողութիւն,
Զաւրաց եւ զաւրավարաց եւ համաւրէն արանց եւ կանանց՝
Առողջութիւն եւ ճշմարիտ խոստովանութիւն[4]*:*

Նարեկացին իշխանության զորություն ունենալուն և հաղթող ու հաղթանակող լինելուն զուգընթաց կարևորում է արդարադատ ու երկյուղած լինելը, որպեսզի թագավորական ուժը և իշխանությունը չփոխվի անիրավության և ամբարտավանության.

Զթագաւորն մեր իւրովք ծննդովք,
Հանդերձ պետական նահանգաւք հնազանդեցելովք,

1 Նույն տեղում, էջ 158:
2 Նույն տեղում, էջ 158:
3 Նույն տեղում, էջ 138, տե՛ս նաև էջ 170:
4 Նույն տեղում, էջ 180:

Արասցես լինել երկիւղածութեամբ սրտի
Խաչիդ պարծանաց ի Քեզ զաւրացեալ[1]:

Թագավորական իշխանության զորությանը աստվածային Աջի զորությունը միախառնվելը և դրանով քրիստոնյա թագավորների անպարտելի դառնալը արտահայտվում է հետևյալ տողերով, ուր վերստին **զաւր** արմատով բառաբարդումները խորհրդանշում են իշխանության զորությունը.

Թագաւորին մերոյ՝ զաւրութիւն
Ինքնազաւր Քոյին Աջովդ պարգեւեա՛,
Լինել գործակից ի պատերազմունս՝ միշտ ի պարծանս քրիստոնէից,
Ի փառս եւ ի գովեստ անուանդ Քո, աւրհնեալ յաւիտեանս[2]:

Այսպիսով, Նարեկացին շեշտում է, որ թագավորի հզորությունը և հաղթանակները պետք է ծառայեն Աստծո անվան փառաբանությանը:

Ավելի քան մեկուկես դար է Շնորհալուն բաժանում Նարեկացուց և հատկանշական է այն հանգամանքը, որ Շնորհալու գանձերում թագավորությանը վերաբերող հայցվածները արդեն ավելի անորոշ և ընդհանուր բնույթի են, քանի որ այս շրջանում դեռևս չէր ստեղծվել Կիլիկիայի հայկական թագավորությունը: Կաթողիկոսության հետ թագավորության հիշատակումը ավելի շատ բաղձանքի ու գրական հետևողության արտահայտություն էր, քան բուն հեղինակային հայցված-մաղթանք: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ թագավորի կերպարի և բարոյական նկարագրի նարեկացիական ըմբռնումները փոխանցվել են Շնորհալուն: Պայծառակերպության գանձի բարեխոսական հայցվածում Շնորհալին ներկայացնելով հայ ժողովրդի բոլոր դասերը, սկսյալ թագավորից, նրանցից յուրաքանչյուրի համար հայցում է նրանցից յուրաքանչյուրի աստիճանին համահունչ պահվածք և բարոյական հատկանիշներ.

Զաւրացո զթագաւորն մեր [այս անուն]
Բարեպաշտութեամբ հերքել զհոյլս ամբարշտութեան,
Զիշխանս՝ իշխել հակառակացն ճշմարտութեան,
Զաւրականացն տո՛ւր քաջութիւն եւ ախոյանիցն՝ յաղթութիւն,
Աշխարհայնոցն ամրութիւն, շինութիւն եւ խաղաղութիւն,
Առատութիւն պտղոց առաւրէիս եւ յաւիտենականին[3]:

---

1 Նույն տեղում, էջ 216:
2 Նույն տեղում, էջ 224:
3 Ներսես Շնորհալի, Տաղեր և գանձեր, աշխ. Ա.Քյոշկերյանի, Երևան, 1987, էջ 294:

Նույն այս ընբռնմամբ, Տիրամոր Վերափոխմանը նվիրված գանձում Շնորհալին գրում է.

Զթագաւորն մեր [այս անուն]՝ հնազանդելովք,
Եւ զիշխանս՝ իշխեցելովք,
Զզաւրավարս՝ զաւրականաւք, եւ զժողովս՝ ժողովրդովք[1]*:*

Այսպիսով, թագավորին հնազանդվում են, իշխանը՝ իշխում է, զորավարը զորք ունի, և ժողովուրդն էլ ներկայացնում է երկրի հավաքականությունը, հավաքական ժողովը:

Մեկ այլ գանձում էլ Շնորհալին շեշտում է քրիստոնյա թագավորների, այդ թվում և հայոց, օծյալ լինելը, որով թագավորական իշխանությունը նաև հոգևոր շնորհի է վերածվում.

Զաւրացոյ եւ զաւծեալսն ի թագ արքայութեան
Սորին շնորհիւ պսակեալ,
Զաւրապետաւք եւ զաւրականաւք՝
Վանեա զներհակսն զաւրութիւնս ոչ աւծելոյն խաւարազգեստից[2]*:*

Շնորհալին այսպիսով, հակադրություն է ստեղծում օծյալ և ոչ օծյալ՝ օծության շնորհը չունեցող խավարազգեստ թագավորների միջև:

Մխիթար Այրիվանեցու ժամանակ, քանի որ արդեն կար Կիլիկիայի հայկական թագավորությունը, նա ոչ միայն հայցվածներում է հիշում թագավորությունը և կաթողիկոսությունը, այլև առանձին գանձեր նվիրում «Թագաւորաց» և «Հայրապետաց», դրանցում գեղարվեստորեն ներկայացնելով թագավորի ու պետության և հոգևոր իշխանության իր ընբռնումները:

Այրիվանեցու՝ թագավորներին նվիրված գանձի ամբողջական վերնագիրն է «Քարոզ թագաւորաց սրբոց Մխիթարայ վարդապետի ասացեալ»[3]:

Այս գանձը սկսվում է Սուրբ Երրորդությանը ուղղված փառաբանությամբ և ասվում է, որ ամենայն ինչ աստվածային այս զորությամբ արարվեց: Այս փառաբանության և գանձի խորհրդի միահյուսմամբ թե՛ առաջին և թե՛ հաջորդող տների համար որպես կրկնակ ասվում է.

---

1 Նույն տեղում, էջ 305:

2 Նույն տեղում, էջ 329:

3 Գանձարան, երկու գրքով, հտ. Ա, աշխտ. Վ. Դևրիկյանի, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԳ, Անթիլիաս, 2008, էջ 254 (այսուհետև «Գանձարանից» կատարվող մեջբերումները կներկայացնենք ոչ թե տողատակում, այլ մեջբերման վերջում, նշելով հատորը և հղվող էջը):

Ահա, փրկեա՛ զմեզ ի մեղաց, մարդասէր գթած,
Բարեխաւսութեամբ Սուրբ թագաւորացն, աղաչեմք:
(հտ. Ա, էջ 254)

Հաջորդ տան մեջ ներկայացվում է Ադամի ստեղծվելը, ապա և մեղանչելը և մարդկային սերնդի բազմանալը ու տարածվելը աշխարհում, որի համար, Աստված կամենալով, որ աշխարհում մարդը անտերունչ չշրջի, թագավորներ կարգեց նրանց համար: Այս մեկնաբանությամբ շեշտվում է, որ թագավորական իշխանությունը աստվածատուր իշխանություն է: Այրիվանեցին տարբերակում է թագավորների երկու տեսակ.

Է՝ որ ողորմեալ, բարի այր ընտրեալ, եւ իշխան կարգեալ,
Է՝ որ բարկացեալ, եւ զչարս ածեալ, արքայ կացուցեալ:

Ինչպես երևում է հաջորդող տողերից, Այրիվանեցին լավ և վատ թագավորների տարբերակման հիմքում դնում է հավատքը, թե որքանով են նրանք հետևում Աստծո ճանապարհին: Ըստ այդմ, որպես լավ և վատ թագավորների օրինակներ բերում է Սավուղին և Դավիթին:

Երրորդ տան մեջ երկնային թագավորից՝ Քրիստոսից անցում է կատարում երկրային թագավորներին, այս շարքը սկսելով Աբգար թագավորով.

Պատուեալդ ի մոգէ, գովեալդ ի հովուէ, նենգեալդ ի Հերովդէ եւ ի Պիղատոսէ,
Ի բոլոր սրտէ, սիրեալդ յԱբգարէ, Հայոց արքայէ:

Այսպիսով, Աբգար-Հերովդես այն հակադրությունը, որ կա Խորենացու «Հայոց պատմությունում»[1], որը համընկնում է Աբգարի կողմից Հերովդեսից վրեժ լուծելուն, իր արտահայտությունն է գտել և այս գանձում, ուր Քրիստոս Ավետարանի հետևողությամբ անվանվում է մոգերից պատվված և հովիվների կողմից գովված ու Հերովդեսի և Պիղատոսի կողմից նենգված, իսկ Աբգարի կողմից ողջ սրտով սիրված:

Մովսես Խորենացու և մեր մյուս մատենագիրների կողմից ավանդված Աբգարի պատմությունը գեղարվեստական չափածո խտացմամբ այսպես է ներկայացված հիշյալ գանձում.

---

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. ԼԲ, աշխտ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 177:

Անձեւ մկրատէ, անկար ասղանէ, հանդերձ Քեզ յղէ,
Զպատկերդ որ հայցէ, Քեզ տիպ տեսանէ, եւ ահիւ պատուէ,
Անդ հասեալ Թադէ, բանիւ բժշկէ, եւ լուսաւորէ,
Եւ անտի դիմէ, ի Հայք մտանէ, զգեղարդն բերէ:
(հտ. Ա, էջ 255-256):

Այստեղ հիշվող Քրիստոսի կենդանագիր պատկերի մասին Խորենացին գրում է. «Զկենդանագրութիւն փրկչական պատկերին»: IX դարի հեղինակ Թովմա Արծրունին այն արդեն անվանում է «հրաշափառապէս և անձառաբար ի վարշամակի տպաւորեալ»[1]:

Այս պատկերը նաև անձեռագործ է անվանվել, քանի որ ձեռքով չի նկարվել, այլ համաձայն մատենագիրների վկայության, Քրիստոս դաստառակը դեմքին է պահել և Իր կենդանագիր պատկերը դրոշմվել է դաստառակին: Աբգարին ուղարկված այս պատկերի համար ասվում է. «Անձեւ մկրատէ, անկար ասղանէ», որով դաստառակը ներկայացվում է որպես անձեռագործ, արդեն մի նոր իմաստով՝ չկարված՝ մկրատով և ասեղով չձևված: Դաստառակի անձեռագործ լինելու այս մեկնաբանությունը զուգահեռ է գծում Փրկչի անկար պատմուճանի հետ, որի մասին ասվում է. «Իսկ քանի որ պատմուճանը առանց կարի էր, վերևից ներքև ամբողջովին հյուսած շուրջանակի» (Հովհ. ԺԹ 23):

Բյուզանդական կայսր և մատենագիր Կոստանդին Ծիրանածինը (X) ևս Քրիստոսի դաստառակը անձեռագործ է անվանում վերջինիս նվիրված պատմությունում, գրելով. «Արարչի գերբնական ցանկությամբ առանց նկարվելու դրոշմվեց կերպասի վրա և դեռ այն ժամանակ ուղարկվեց ի ապաքինումն Աբգարի»[2]:

Այս պատկերի կենդանագիր լինելու մասին էլ Ծիրանածինը գրում է. «Միայն խոստովանությամբ, առանց ներկերի և նկարչության արվեստի կտավե կտորի վրա կենդանագրվեց դիմապատկերը»:

Չորրորդ տունը նվիրված է Հռիփսիմյանց, Տրդատին ու Ս. Գրիգորին և հաջորդ տանը արդեն անցում է կատարվում Կոստանդիանոսին և բանաստեղծական նույն սեղմությամբ ներկայացվում է նրա դարձը դեպ քրիստոնեություն:

Անհրաժեշտ է նաև նշել, որ «Գանձարանը» կրկնակիորեն բազմաշերտ մի ժողովածու է, որը պայմանավորված է հետևյալ երկու հանգամանքներով:

---

1 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխտ Վ. Մ. Վարդանյանի, Երևան, 1980, էջ 76:

2 Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Բ, Բյուզանդական աղբյուրներ, Կոստանդին Ծիրանածին, աշխտ. Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 177:

Այս ժողովածուն անցել է ձևավորման մոտ չորսհարյուրամյա ճանապարհ զարգացման երեք փուլերով, որոնցից առաջինը սկսվում է Գրիգոր Նարեկացիով, Ներսես Շնորհալիով, Սարգիս Անեցիով և մի շարք այլ հեղինակներով և հասնում մինչև ԺԳ դարի երկրորդ կեսի հեղինակ Մխիթար Այրիվանեցին: «Գանձարանի» կանոնավորման երկրորդ փուլը սկսվում է Մխիթար Այրիվանեցիով և հասնում մինչև Գրիգոր Խլաթեցի: Ինչպես երևում է «Գանձարանի» վերջում Խլաթեցու գետեղած չափածո հիշատակարանից, Մխիթար Այրիվանեցու Գանձարանի գրությունից ուղիղ հարյուր տարի անց՝ 1386թ. ինքը եկել է Այրիվանք՝ Գեղարդավանք և այնտեղ ծանոթացել Այրիվանեցու «Գանձարանին», և ապա ամբողջացրել «Գանձարանի» իր նոր խմբագրությունը, որն իր հերթին որոշակի վերախմբագրման է ենթարկվել 15-րդ դարում, պայմանավորված այդ շրջանի գեղարվեստական մտածողությամբ և ժամանակի առաջադրած ազգային եկեղեցական խնդիրներով: Ինչպես Խլաթեցին է գրում. «Տէր Մխիթարն ի ՉԼԵ (1286) թուին ասացեալ էր զիւր բանսն եւ Գրիգոր վարդապետն ի ՊԼՁ (1387 թվին) հանդիպեցաւ նորա բանիցն»[1]:

Այսպիսով, «Գանձարանում» ներկայացված թեմաները եկեղեցաքաղաքական մտածողության և ըմբռնումների մոտ չորսհարյուրամյա ճանապարհ են անցել:

Առաջին այս բազմաշերտությունը եթե վերաբերում էր «Գանձարանի» ժամանակային շերտերին, ապա երկրորդը արդեն վերաբերում է նրանում ընդգրկված հեղինակներին և նրանց ստեղծագործությունների ընտրման սկզբունքներին: Գանձարանը լինելով բանաստեղծական ստեղծագործությունների հանրագումար, այն միաժամանակ տարբեր հեղինակների բանաստեղծական գործերի ժողովածու չէ: Գանձարանային միավորները այս ժողովածուում իրար են հաջորդում ոչ թե ըստ դրանց գրության հեղինակների, այլ եկեղեցական տոներին զուգահեռ ընթացող կանոնների, որով տվյալ տոնի կանոնի գանձը, տաղը, փոխը, մեղեդին և հորդորակը կարող են գրած լինել տարբեր հեղինակներ: Այսպիսով, տվյալ կանոնը կարող է ներկայացված լինել միանգամայն տարբեր հեղինակների գործերով, որը թեմատիկ միևնույն ընդհանրության շրջանակում նկատելի է դարձնում գեղարվեստական մտածողության, արտահայտչամիջոցների և թեմայի մեկնաբանության որոշակի տարբերությունները: Այս հանգամանքը վերաբերում է հատկապես այն թեմաներին, որոնք իրենց եկեղեցական բովանդակությանը զուգահեռ սերտորեն կապված են եղել հայ ժողովրդի ազգային-քաղաքական իղձերի և ըմբռնումների հետ: Քանի որ այդ ըմբռնումները որոշակի փոփոխություններ են կրել

1 Երևանի Մատենադարան, ձեռ. հմ. 6529, թերթ 4բ-5բ, տե՛ս նաև Գանձարան, երկու գրքով, գիրք Բ, Մատենագիրք Հայոց, հտ. ԺԴ, աշխտ. Վ. Դևրիկյանի, Անթիլիաս, 2008, էջ 1557:

պատմա-քաղաքական տարբեր իրավիճակներում, ուստի «Գանձարանի» համապատասխան թեմաների ուշադիր քննությունը վեր է հանում և քաղաքական այդ ակնկալիքների զարգացման ընթացքը: Ասվածը վերաբերում է և՛ «Գանձարանում» հայոց թագավորներին, և՛ բյուզանդական կայսրերին նվիրված ստեղծագործություններին, և՛ հիշատակություններին: Պայմանավորված նույն այս գործոններով և ազգային-քաղաքական ակնկալիքներով, բյուզանդական կայսրերից «Գանձարանում» հիշվում են Կոստանդիանոս Մեծը Կոստանդին և Կոստաս որդիներով, Արկադեոս կայսրը, ինչպես նաև Մեծ և Փոքր անվանվող Թեոդոս կայսրերը: Նրանցից Կոստանդիանոսը և որդիները հիշվում են Հայոց Դարձի և Ոսկյանց ու Սուքիասյանց նշխարների գյուտի, ինչպես նաև Երուսաղեմում խաչափայտի գյուտի առիթով: Արկադեոս կայսրը հիշվում է որպես հավատո ուղղափառության պաշտպան արիոսականների դեմ պայքարում: Նույն ձևով Թեոդոս Մեծն է հիշվում որպես Մակեդոնի կամ հոգեմարտների դեմ պայքարող, ով աքսորից ազատեց նաև հոգեմարտներին հարած Վաղեսի կողմից Պատմոս կղզին աքսորված Ներսես Մեծին: Թեոդոս Փոքրն էլ հիշվում է գրերի գյուտի և Վարդանանց տոների առթիվ:

Այսպիսով, «Գանձարաններում» հիշվում են Աբգար և Տրդատ հայոց թագավորները և Կոստանդիանոսից մինչև Թեոդոս Փոքրն ընկած կայսրերը:

Գանձարանի ԺԵ դարի խմբագրությունում թագավորությունը վերստին հիշվում է որպես գրական-ոճավորված մի հասկացություն, ավելի շատ կապվելով հաղթող թագավորների ընդհանուր քրիստոնեական ըմբռնման հետ:

Այս հանգամանքը վկայում է, որ «Գանձարան» ժողովածուի հիշյալ գանձերը և գանձերի բարեխոսական հատվածները որքան էլ որ ընդհանուր բնույթի են, այնուամենայնիվ նրանցում արտացոլվել է երկրի պետական-հոգևոր իշխանության կառուցվածքը և դասային հարաբերությունները, ինչպես նաև գանձասաց հեղինակների երազանք-իդեալը, թե ինչպիսին պետք է լինի հայոց աշխարհը իր պետական ու հոգևոր-եկեղեցական կառուցվածքով: